# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սիս բնակավայր

06.04.2026 թ.

Սույն թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «ՌԻՉԳԱՁ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի մարզի Սիսի ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախագծման աշխատանքներ իրականացնող ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ կատարվելիք աշխատանքների մանրամասները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրության կողմից մտահոգություն չկար, սակայն հարց հնչեց մուտքի գրության անվան վերաբերյալ, որ այն վերաբերում էր արդյունահանումից առաջացած ավազանում ձկնաբուծական գործունեության իրականացման անվամբ՝ Վ. Հարությունյանը մանրամասն ներկայացրեց, որ լրամշակմամբ և ամփոփաթերթով այն կարգավորվել է և նախատեսվող գործունեությունը պետք է ներկայացնել փորձաքնության առանձին փաթեթով՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, ձեռնարկողի կողմից

նշվեց,որ ընկերությունը դիմել է համայնքին՝ ծկնաբուծական գործունեության վերաբերյալ նոր լսումներ կազմակերպելու վերաբերյալ այդ գործընթացների օրենքով սահմանված նորմերով: Քնարկվեց մի քանի հարցեր կապված 2-րդ կարծիքներ ստացվելու վերաբերյալ, որին ձեռնարկողը պատասխանեց և հավաստեց, որ համապատասխան դիտողությունների վերաբերյալ կներկայացվի ամփոփաթերթով:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, նախաձեռնողի ներկայացուցիչներ, համայնքի ներկայացուցիչներ:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Վ.Հարությունյան**

**«ՌԻՉԳԱՁ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ս. Գևորգյան**